

## «ՀԵՌԱՒՈՐ ԱՐՅԱԽ»...



Արցախի տագնապալի վիճակին եւ Հայաստանի ու Արցախի ծայրաստիճան սրած կացութեան խոր անձկութեամբ կը հետեւի գաղթաշխարհի իւրաքանչիւր հայ, ամէն ոք իր ձեռով եւ միջոցով դրսևորելով իր մտահոգութիւնը: Այս իւղանկարին հեղինակն է Նիւ Հեմշիր Նահանգէն ասպարէզով ծանօթ ջղաբան Տոմթ. ՀԵՆՐԻ ԱՍԹԱՐՃԵԱՆ որ նաեւ նկարչութիւն կ'ընէ սիրողաբար: Իւղանկարը խորհրդանշաբար Հայաստանը եւ հեռաւոր Արցախը կը պատկերէ երկու եկեղեցիներով, քաժնուած կրակէ հովիտով մը: Բոցերը կ'աւերեն նաեւ «եկեղեցի»ները - հայրենի հարազատ հողը: